

2336

L. N. 5





ՎԵՐԻ

ՆՆՆՆՆՆ ՆՆՆՆՆՆ ՆՆՆՆՆՆ

Հրատարակի ամեն ամսու մէկին :

Ստորագրութեան տեղերն են

Ղարաթա Յ. Միւհեհեթիան տպարանը .

Զմիւռնիա Թանգարան Աստղագրական Ընկերութեան :

Միջոցիւ Վերձանութեան Թանգարանը :

Տարիսն գինն է կանխիկ :

60 դուրուշ

Վերջինս " " " "

55 " "

Եւրոպայ " " " "

20 " "

Դպրատան երթալից հանդէսներու ճամբու ծախքը առնողն վրաս է :

Ստորագրութիւնները առաջին թիւէն կ'սկսին :

1 ՓԵՏՐՈՒԱՐ

Ա. ՏՄԻՒ 1862

ԹԻՒ 8

ԱՐԳԵՅԻՆ

Մեր նախնիքաց թուով խոստացեր էինք զիւղիս Վերձանութեան Թանգարանի վերայ ուրախալի լուրեր հաղորդել ընթերցողաց, ուստի կը փութամք խոստումսիս կատարել, ոչ նուազ բերելու թեամբ ծանուցանելով զի Յունիսար 17 երեկոյ ժամը 2ին 20ին չափ Համադրի Գործիքի Վեճիք այն Թանգարանի սրահը փոխելով ժամը 3ին ատենաը բացուեցաւ գեղեցիկ ատենաբանութեամբ մի մեծարդոյ Եւսուֆեան Տեղբան Աղայի, որ յետոյ բարձրաձայն կանոնադրութիւնը կարդալով առաջարկեց իւրաքանչիւր ոք իր ազատ կարծիքը յայտնել, ու վերստին իւրաքանչիւր յօդուածները մի առ մի կարդալով բողոքի առաւելութեամբ ընդունուեցան կամ սրբագրուեցան բոլոր կանոնները, այն պայմանաւ զի վերստին ընդհանուր ժողովով քննուին, և այս ընդհանուր ժողովոյ անդամները նոքա պիտի ըլլան որք կամ տարին 100 դահեկան և կամ եւամսեան 30 կանխիկ հասուցանելով բաժանորդ գրուին և այն ալ

միայն Հայեր : Արդ կը հրաւիրեմք ընթերցասէր անձինքը սոյն բարենպաստի ընկերութեան բաժանորդ գրուիլ որ միակ միջոց մի է ընթերցասիրութեան փափարը ազգիս մէջ տարածելու :

Եւսուֆեան գեղեցիկ տոանաւորը մեր այս ամսեան բարեկամ Պ. Տեղբան Ս. Վերձանեանց մեզ իրկած է հրատարակելու :

Արդոյ խմբագիրը Վարդ պատուական Հանդիսի :

Սոյն հետագայ բանաստեղծական տաղաչափութեան ձեր պատուական անսորեայ Հանդիսին եջերուն մէջ տեղէն մի շորհելու բարեհաճեցէք :

Մնամ բարեսցապարտ Չերդ Աղուութեանց  
Տեղբան Մանուկ Արձանեանց  
Վանի :

ՊԱՆՈՒԻՍ ՊԱՏԱՆԻ ԵՒ ԵՓՐԱՏ ԳԵՏ

Երբ զրկեն իմ Հայրենեաց բաժնուերով անամայ,  
 Սարերով ու ձորերով ծածկելէր նա աշերկցս,  
 Ընդ ամով Եփրատայ չուաւ պանդուխտ ընկերներովս,  
 Դողգով ձեռքով աղբիւլով թեւ սղերգոսկ իմ քնարին,  
 Կանամ էի միմեջէլ դառնակիսիմ իմ ցաւերից,  
 Բայց գիտեալ որ Եփրատ է վշտաւոր և բան զիս,  
 Վասն որոյ թողեալ զիմ վշտ հարց աւե՛նի նարանից:  
 «Եփրատ, ինչու դու այգոյն տխուր արուում գնում էս,  
 Ե՞ր շն փրփրոք սիգալով ամերդ զեղուլ զով ջրով:  
 Ինչու համար պղծում էն քս ծոց զեւուեր թունաւոր,  
 Դու գրախտարուզն գեա մի էս, մըր են բարկեր  
 բերաւոր»

«Ինչու համար զուարթմ զիմօք խաղ շնաւում իմն  
 գալիս»

Այլ անասրէր զժամակ աներդ աղբու գետն  
 էր ձեն փթթում քո եղբր ծաղկաւոր սիրուն համաւետ,  
 Ու ցանկ դրոսն և սգան սպինանան փեթով:»

«Ինչու արծուիք սրթաւիչ կամ սիրամարդք զեղանալ  
 Չեն շքում քո ամերով, որ բայց խլեն այս ակտեր,  
 Եւ խնամանու թե բանալ անցաւորացն նիալ»

Սառնամանեաց և կարկից պահել զնոստ անկէհերք  
 «Այլ հակառակ ձեւ առնուն աւերանու թռչուներ  
 Տերաւտիս զիւրդ ագաւաք և վայնառուն վատ բուր,  
 Որոց ամեղծ ձայներն և աղական ոտքերից»

Ինձ երևում է, Եփրատ, դու ամերովդ ես պղուել տ  
 «Դեռ ես դու գեա գրախտարուզն, ձայն սուրհայտ  
 ձայն սուր ինձ»

Ինչու ունդէտ բնութեան տէս այդպէս անխաւք երկիս:  
 — Իմ արեգակն է խուարեր, աչեր չունիմ նայեր  
 Բերանս արեաւոք է դառնացել, լեզու չունիմ խօսերս»

Անց պատանի, անց իմ աղեաց կոխուտեղով իմ խոցեր,  
 Ե՛րթ, և մի բարբեր հին ու հատած շարաներս:  
 — Եփրատ, Եփրատ, ես տեսար եմ քեզ նման վշտաւոր  
 Քս ցանկերից չեմ գրուում, բայց ինձ ընց ինձ, և ես քեզ,  
 Գոյց է մեր ձայն արթնցունեն զձեռքն երկից ՚ի յայց մեզ:

— Երկի՛ք Երկի՛ք անանձ գիր ինձ, հերքեր կոյճակ  
 իմ շարուն»

Արեւ լեռներէ իմ շքանալ մտնել սուր քեռ  
 Եւ դուք մտնեալ իմ զիւցարուք, որ ձեր արիւն դեռ  
 ծխայ:

Ծոցէս ի վեր և ամերից բարձեր ձեր գրուիք վշտանց:  
 Հերք չէ գեա իս որ երբեմն հարս բնաւից ցանկաւ,  
 Վայեմ սգամ և նուազիմ անմիտիմար իբր այրի:

.....

Այս ամերից չէր որ երբեմն ես սիգարանմ խաղայի,  
 Ինձ երևեր թե Երեմի գրախտում մեջ մղրէի,  
 Իսկ այժմ ինչու ինձ հրատալ միմն գծոյք երեի,  
 Ես առջրիմ և նուազիմ ու՛սին իմ ի գրախտ դժպիչ:

Ուր են ոտան բիւր պոյսպոսոք արարատեան տխրեանք  
 Եր ձոխածեմ էլ շն ձեռնում իմ եղերօքս լրական  
 .....

Ինչու արդէս ասող գիտաւոր էլ չեն լողում օդուս մեջ,  
 Սուր շողողան սղաք նեւից ամերս աւե՛նէլ սպանով:

.....

.....

Ո՛հ երբ բաժանք սուրբ երկնահոս պղծեց լիզի գծոխաց  
 Արբին նարա և դառնացան և թող գտան տէս ձիգաւան  
 Հառան հարին գիշերահաւք, ստանց արեւմի դառնացոյ  
 Ոմանց համար էլ ցայդ ցորեկ հարիմ մոշիմ անհնայ:

Որք թեւթափ արծուի նման օտար աստղերից ներքեւ  
 Ատանդական անթեւան ս՛ն միկում են ինձ նեւն»

Թե անց կարկուտ հուր սղաւնայ, կրեն հարաւան սաւաղն  
 Եւ այսպիսօք փսխան անման օր բոս օրէ պակասին:

Բայց որչափ ես նարա համար անհնարին սաշրիմ,  
 Քիչ էն ս՛ն ինձ վշտակիցներ, և տարիաւորք իմ վտարին»

Եւ ես աւա՛լ շատ իմ սրգուց օտար և խորթ երե իմ,  
 Յորոց պատճառս և սիրելիքս թեթափ մնալ ստիպին,  
 Ե՛յ պատանի ահա ցաւերն իմ բաւական յայտնեցի»

Բայց գիտցիր դու որ բժշկում սպա ոչ է հարեի  
 Մինչ ցորն յարում սղջ Հայաստան անմահ ծաղկաւոր ընմի՛

Եւ սուրբ բաժանի կրքե զոց ՚ի մեջ նարա ծաւալի  
 Եւ իմանալ իմ ձեռք ձեր զիւցարուք անանձ կայի  
 չար կայի»

Եւ Եփրատ էլ Եփրատ անտէ իւր անարար ընդունին,  
 Արք լուր և զոտոնէ և դա, զի ձայն քո ինձ սիրելի:  
 — Ես պատանի եմ միջաբեկ, ես պատանի անտէրուչ  
 Քնարիս թեկեր մաշել են ս՛ն միմեջէլ անմաւուչ»

Հայաստանի բնաւ վայրեր իմ արցունքիս բաւ են ոչ»  
 Գնամ թափել, ս՛ Եփրատ աւա՛լ, օտար ծոց:  
 Իմ հայրենեաց քաղցր սահմանն բաղդիս աստղն է պղցել»

Ու անքնուլ և առեի հարկուն մի թուալեր,  
 Ո՛հ բիւր օտար և բարեկամ աստղից մեջ է մարբել»

Ազան է անդ թե երթալիս կամ թե անիալ չեմ գիտեր  
 Թափաւական պանդխտի մի աչին է արցունք ու՛ ձեռե  
 ՚ի ծոց»

Բայց սղաւոյս յարանան կարծում եմ թե կայ որ ոչ»  
 Հայաստանի թմրած վայրեր ՚ի հրմանջ իմ արթնցիկ»

Եւ վերք վերքի վերայ գիշած հատայ միտը քայք եղբր:  
 Ես միաւոր որդի մի եմ ծնող քս ձեր, և անկար,  
 Խի՛նդ, բայ նոցա այս կենցաղում մեջ մխայնակ ես էի»

Հայտն ինչու անմիտիմար թողալ ժուռ դամ արե սուր»  
 Չի թմրեցան բաղբեկ քն, աւա՛լ զիս տածելէ մինչ այս ժամ»

Ճերք սղալի ծնողք թշուաւ հեզ և գժբաղք որդույ մի»  
 Սնայրք և դե՛կ ծաղկաւորոյ ծիծառն մի սէս թախումով

Թափեր այս գեա արտասուայ յայրի՛ւր սուր որ ձեր գարով  
 Ո՛հ չունայր անտէն բնաւ թախումով մի սղալի  
 Մի լար ծնողք իմ աննայի մի լար չե բուռէր սղալի  
 Որ իբր արեւն իմ բնական երակիրաւս մեջ իտողայ»

Որ զիս այն կրկին անխորձ հաստ ցանն ձեր գիրկ քաղցր»  
 Բերեալ ցուպ գողով բաղկայր, ս՛լ թե կենմէ չերճի  
 լանջ:

Բայց լար զի գու՛թ ծնողաւան բնաւ յուսով ոչ յաղթի»  
 Եւ մանաւանդ երբ տեսներք դառն ու լարք իւր փարի  
 Կամ ճ՛նձրուկ թեթեւ իւր թե ստացնելով ձագն մտաղ»

Ճառէ ՚ի ծառ սղանայ խոցոյ ճաւաղեղով սիրահար»  
 Ահա Եփրատ անն այսպէս արամճիկի զորն ի բուն»

Կենջ ու համահ տաշր սրաից եւթ փոքր ինչ սիրաւում  
 Ա՛հ նայն և ինձ, և այս քնար որ միմեջէլ անդաւար»

Քնար, սրտէս իմ հրախու արտասուարեր զվարար»  
 Իսկ այս ցաւոց եթէ սիգեմ թե բաղդ պատճառ իրական  
 Սառէ Եփրատ, տես և դու բողբեք ու սղջ Հայաստան»  
 Այլ ճրագն Հայոց՝ զրբ մարեցին հանք գժոխաց պիւրծ  
 շնով»

Ճրագ ցանկալին քո և տարիսին թորգունեաց :

Այնուհետև իբր Հոյ անուն գրուցեցաւ Հոյ ճակատ .  
Քանդխտութեան խաղանութիւն , գառն և ճրագ օտարաց .  
Բայց հինգ դար է հերիք չ գեւ սակին շտի երկաթից .  
Ա՛՛՛ Հոյ անուան յարգ ճանաչող միթէ քնու ոչ մնաց :

Կան ո՛ր Եփրատ կան շատ երազք , ուր դեռ պահի անարատ  
արիւնն , ուր մէջ ընկղմեցաւ Բարկոնեան Սեփ Վիթխայն .  
Որք պարզ ձիթում մէջ գնեցով պատրոյդ մարուր ՚ի պատու  
բատու :

Նկրտում էն հար մի գտնել , որ մտանն աւագատու . . .  
Այց որք գտն ձէթ և պատրոյդ նոյն կարող են և  
կրակ :

Եւ մտ է քոյդ կրկին հաստատ սրակիլ յանուն Եփրատ .  
Ո՛վ թէ վներ ինձ դարձ կրկին կամ ողջունել գթել կրկին ,  
Եւ նուագել գթել Եփրատ հարս գեղազանձ նոր յԱշխն :

ԿԱՏԱԿԵՐԳՈՒԹԻՒՆ

(ՏԵՄԻ- 1.2.3.4.5.6.7.)

ՏԵՍԱՐԱՆ Դ .

ԿԻՐԱԿՈՍ ԱՊՐԱՅԻՆ .

Ա՛՛՛ , որչափ սիրտս դողաց , վախնալով թէ  
Պարեա լրած է խօսակցութիւնս , բայց փառք  
Լսուածոյ որ չ՛յայտնուեցաւ գաղտնիքը ,  
Թշուառականները չորս կողմն պաշարած են  
միշտ , ու կ'ուզեն ինձ փոս մի փորել , ես շատ  
սակի ունիմ , նոցա ինչ կը վերաբերի . միայն  
կը վախնամ , որ կը կողարտեն զիս . և անշուշտ  
այն ատեն բարեկամներս անգամ թշնամի կը  
դառնան , սակե վերջը ուխտ սխտի գնեմ , որ  
հաշիւ ըրած ատենս արասանութեամբ ջը-  
նեմ , այլ մտքով հաշուեմ , ահաւասիկ հի-  
մայ ալ Շուշան կուգայ եթէ չտեսնէի , այն  
ալ լսելով խօսակցութիւնս՝ զիս երկիւզի ու  
ապրանիւ ասնայ մէջ սխտի ընկղմեցներ :

ՏԵՍԱՐԱՆ Ե .

ԿԻՐԱԿՈՍ ԵՒ ՇՈՒՇԱՆ .

ԿԻՐ . Ի՞նչ կ'ընէ աղջիկս , Շուշան , ու  
բայն է թէ կը տրանջայ դեռ , ահա հասաւ  
այն ցանկալի ժամը , պիտի սխիկք հարսանի-  
քը , բայց աւելի աղէկ չըլլար , եթէ երկու  
հարսանեաց ծախքը մէկէն ըլլայ , այսինքն  
Միհրանայ հարսանիքն ալ Վարդանուշայ հետ  
մէկ օր կատարուի :

ՇՈՒՇԱՆ . Միհրան որո՞յ հետ պիտի ամուսնա-  
ցընես :

ԿԻՐ . Ի՛ժիշկը առաջարկեց որ իւր աղջիկն  
ալ որդւոյս տայ , ես ալ հաւանութիւն տուի  
և կարծեմ՝ վայելուչ է , բայց դեռ Միհրան  
տեղեակ չէ այս խնդրոյն , չեմ գիտեր թէ ինքն  
ալ դիւրաւ կը հաճի :

ՇՈՒՇԱՆ . Տէր արդէն ըսի որ որդւոյդ հաւա-  
նութիւնը հայրական կամքէն կախեալ է , սու-  
բա վերայ երբէք մի մտածել , ուստի հար-  
ցում մի ունիմ ընելք , և կը խնդրեմ որ  
առանց բարկութեան պատասխանէք , յետոյ  
դարձեալ ձեր կամացը կը յանձնեմ հաճու-  
թիւնը , Միհրանայ ըրած որոշուած լաւագոյն  
է , իսկ Վարդանուշայ համար՝ որ հաճեցաւ  
կամիասայ հետ ամուսնանալ , բայց որդիաւ  
կան հնազանդութեամբ , և ոչ թէ սրտի հա-  
ճութեամբ , այլեւ թէ , ես ալ մինչև ցարդ  
լուծութիւն պահելով զայն հնազանդեցնել  
կուստտեի , որպէս զի ձեր հրամանը կատար-  
ուի , բայց հիմայ ներում խնդրելով կը հար-  
ցընեմ , որովհետև առանձին եմք , և լսող  
մի չկայ , ի՞նչ դիտաւ որութեամբ այնպիսի  
անձի մի հետ որդիդ ամուսնացնել պատշաճ  
կը դատես :

ԿԻՐ . Ի՛մ և աղջիկանս երջանկութիւնն ու  
հանգստութիւնը յարատև ընելու դիտաւո-  
րութեամբ :

ՇՈՒՇԱՆ . Ի՞նչ , ծուռ և անհիմն դիտաւո-  
րութիւն կը յուսամ , որ այս ամուսնութեամբ  
երջանիկ և հանգիստ պիտի ըլլար , կը յուսամ  
որ կամիասա ձեզի համար գանձ մի է , ի՞նչ ,  
կը յուսամ որ նովաւ ձեր սիրտը գո՛հ պիտի  
ըլլայ , երբէք , ես ընդհակառակն գու-  
շակելով կը ցաւիմ ու կը արամիմ , որ յե-  
տոյ անօգուտ զղջումի զձեզ կարի անհան-  
գիստ պիտի ընէ , Տէր ի՛մ , բանի որ զուակաւ  
ցրդ նորածաղիկ մանկութիւնը այս բազկացս  
մէջ աճելով հասաւ երիտասարդութեան  
պերճ հասակին , բանի որ երկար աստեղէ ՚ի  
վեր ծառայական և երախտագիտական հաւա-  
տարմութիւնը կը զրդէ զիս , վերջապէս քա-  
նի որ այս ամն բոլոր ընտանեաց վերայ ունե-  
ցած սերս ու սրտիս փափաքը զիս կ'ստիպեն  
անտարբեր չ'մնալ , չեմ կրնար չ՛յայտնել ճըջ  
մարտութիւնը , չեն կրնար գոցվիլ սչքերս  
յայտնի խաբէութեան մի վերայ , կը կրկնեմ  
դարձեալ թէ մի յուսար , մի յուսար որ ձեր  
երջանկութիւնը կամիասայ վերայ սխտի հա-  
տատուի , մինչև ցարդ այդ խաբէբայ անձը  
ի՞նչ օգուտ ըրաւ վնասէն ՚իլլատ , ինքզինքը գու-  
վելէ , մեծախօսութենէ , շղթարդութենէ ,  
կեղծաւորութենէ ու բիշ բան չ'գիտեր , զորս  
իրեն գործիք ընելով բաւական ժամանակ է

որ որովայնը կը լեցնէ հաս ու անցագ. որիորը կը կշտացնէ, և մէկ կողմանէ ալ նաև դքեղ անմտի տեղ գրած է: Ուրէ նորա մէկ տակի արդիւնքը ու շահը . . . մի խաբուիր, Տէր իմ, նորա կեծուպատիր խօսքերուն, և մի զուհեր նորա ոչնչութեան անդ կանդ անմտան գեղեցկութիւնը, որով կարող ես ստացդ ու բախուածիւն մի վայելել:

ԿԻՐ. Շուշան զգուշացիր . . .

ՇՈՒՇ. Այո՛ Տէր, մինչև անգամ արժան չեմ համարիր այնպիսի ոչնչ մէկը իմաստուն կոչել, այլ իմաստակ, և իրաւամբ իմաստակ է, բրած խօսակցութեանց մէջ բնաւ իմաստ մի չկայ, սնասարձութեամբ սուտ բաներ կը խօստանայ ընելու, շահու ճամբայ ցուցնել, ինչ ինչ խելքիս վեց ինչ իմաստութեանց, եթէ գիտէ հարստութեան ճամբան, թող ինքը գործածէ, վերջապէս եթէ գիտէ հարստութեան ճամբան, ինչո՞ւ ուրեմն ինքը չքաւորութեան մէջ կը խղզուի, ամենտ չինչ խօսքերու ունկնդիր մի ըլլար:

ԿԻՐ. Բայց Շուշան, ի՞նչո՞ւ ըլլալէն վերջը կը խօստանայ ցուցնել շահու ճամբան:

ՇՈՒՇ. Բնէ է որ զքեզ պիտի ընէ իրեն գրամագլուխ, և մի տարակուսիր ըսածիս վերայ, ահա այդ խօսքը յայտնի նշան է, մտածէ մէկ անգամ, ընելիք մի չունի, այլ շաղակրատութիւն մի է ըսածը, իւր միտքը անգամ մի ամուսնանալ է աղկանդ հետ և յետոյ որ անհնարին է քակել այս կապը, քեզ մով հանդիստ կեանք մը անցնել, դու պիտի սնուցանես զայն, զի ուրիշ տեղէ մի յոյս չունի, իւր բաղձանքը քեզի հետ միաւորին է, խաբէութիւնը բարիքներ ցրցունելով կը մտրեցնէ մարդս, եթէ ինքը այդչափ իմաստուն է, թող նախևառաջ իւր իմաստութեան մէկ պատուը և արդիւնքը զուգնէ և այս աղբի կըրդ ու գերու առջարկութիւնը ընէ. գիտուն եմ, կրթեալ եմ կ'ըսէ: Արգանուշայ հետ խօսելու համար ուրիշէն հրահանգ կ'առնու, ինչպէս որ դու ալ զարմացար թէ ինչ խառնափնդոր խօսքեր կ'ընէր, ուրեմն ի՞նչ կը յուսաս իմաստակէ մի, ոչնչութիւն. իմաստակութիւն ըսելը պարզապէս ոչնչութիւն ու պռոտտախօսութիւն ըսել է:

ԿԻՐ. Ա՛հ, Շուշան ի՞նչ կը խօսիս և զիս կը շփոթես, դառն մտածութիւնք կը վրդու վնն միտքս կատարել ալեաց նման, իրաւունքը կը փայլի ըսածներուդ վերայ, շփոթեալ մտացած եմ թէ ի՞նչ ըսեմ և ինչ պատասխանեմ:

ՇՈՒՇ. Եթէ բարեբաօտի կենաց հանգրստութեանը կը փախարիս, փոխէ բարբալ վնն միտքդ, դուշացիր որդւոյդ կեանքը դիււահարսի մի ձեռք յանձնելէ որ է յայտնի վշտանքի մէջ դնել, որդիդ կը սոսկայ այն հրեշն երեսը տեսնելու, մահ կընարէ քանի՞թ իմաստակայ հետ ամուսնանալ, և ահա ստիպուեցաւ լուծութիւնը քակել, բռնութիւնը զինքը խոնարհեցուց, բայց գիտցիր ո՞վ Տէր որ աղջկիդ արտասուաց մէջ գիշերը անքուն և ցերեկը անդադար հառաչանքով կը հալեցնէ իւր թարմ կեանքը: Արասքս ուրեմն տնէդ այդ չար իմաստակը որ բնակութեանդ խանգարիչն է, որչափ իշխանութիւն. բայց ի՞նչ իրաւամբ ընտանեացդ հրամայելու իշխանութիւնը պիտի ունենայ, ա՛հ Աստուած մի արասցէ իւր գիտաւորութիւնը կատարելի, դուցէ քեզ ալ հրամայելու իրաւունքը ունենալ պիտի կարճէ և այն աստիճանաւ ըստ ինչո՞ւ բարեկարգութեան աւերիչը պիտի ըլլայ. ուստի լուսադոյն կերպիւ մտածելով ժամ առաջ աղաօտ զքեզ այն հրեշն ճանկերէն, երբեք նորա սնասարձութեանց և շղջբորգութեանց մի մտաներ ինքզինքդ:

ԿԻՐ. Ի՞նչ ընեմ Շուշան . . .

ՇՈՒՇ. Եւ առ պայմանդ, ի՞նչ վնաս կըրնայ ծագիլ իմաստակէ մի, և այսուհետև տունդ մանելու անգամ տուած իշխանութիւնդ առ ձեռքէն որ յետոյ խաղաղութիւնդ գանկելով աղջկիդ ալ արժանաւոր և աղնուական մէկու մի հետ ամուսնացնես, որմէ ծագի ու բախուեցաւ ու ընտանեացդ անդորութիւնը, որչափ աղէկ կըլլայ եթէ հաճի Աստուած աղջկիդ առնելու յորմէ վերջն աստիճան գո՛հ պիտի ըլլաս:

ԿԻՐ. Ո՞վ է այդ Աստուծ:

ՇՈՒՇ. Արդե՞հ առաւտով երեւելի վաճառականին որդին, որոյ անուան համբաւը աշխարհիս չորս կողմը տարածուած էր, Աւրոսայի հետ ունեցած առևտարական յարաբերութիւնը և մեծ համբաւը ունէր, այժմ իւր որդին ալ Աստուծ, ոչ միայն նորա մեծ հարստութեան ժառանգ եղած է այլ և ունեցած բոլոր հաղուագիւտ և աղնիւ ձրիցը:

ԿԻՐ. Ո՞ւր է այդ երիտասարդը, և ո՞ւր կը բնակի:

ՇՈՒՇ. Ո՞վ բարեպառտէ՛հ առ ի՞մ, հաս կուգայ, զինքը անձամբ տեսնելով գիւրաւ կըրնաս հասկնալ իր վարքը:

(Աստուծ կըմտնէ)

ՏԵՍԱՐԱՆ Զ.

ԱՏՈՄ ԵՒ ԱՌԱՋԻՆՆԵՐԸ

ՀՈՒՇ. Սեր տերն ձեր տեսութեան կ'փափաքեր և ձեր բարեկամութիւնը ստանալու կերպը կը փնտռէր :

ԱՏՈՄ. Ես ալ ինքզինքս բաղդաւոր կ'համարիմ ստուգիլ, որ արժանացայ այնպիսի պարտնի մի որ կընդունի և կ'հաճի մեր բարեկամութիւնը ստանալ :

ԿԻՐ. Ո՛վ սիրելի Աստուծո՛ւմ, անուամբ միայն ձեր հօր գովեստը լսելով փոքր ինչ ծանօթութիւն ունէի. կը գովէին զինքը բայց իրաւացի է եղեր իւր վերայ եղած գովեստը, որովհետեւ նորա ազնիւ բնաւորութեան զգալի յայտարար մի էք դուք, ձեր ազնուական գէտքով ու քաղաքավար վարմունքով :

ԱՏՈՄ. Այնպէս և ես ձեր վեհանձն բնաւորութիւնը լսելով փափաքեցայ տեսնուելու : որովհետեւ քիչ օրէն երկար ճամբորդութեամբ պիտի հեռանամ այս քաղաքէն :

ԿԻՐ. Ի՞նչ գիտաւորութեամբ պիտի թողուք այս քաղաքը :

ԱՏՈՄ. Հօրս մահունչէ ետեւ, գրեթէ բոլոր գործքերս կարծի գրի, և գոհ եմ հարբատութեանս վերայ, կը բաւէ ինձ իմ հարբատութիւնս, ուստի այժմ միայն ունիմ օտար երկիրներ երթալով մի միայն բնաւորութեամբ գեղեցիկ կողակից մի ընտրել ինձ և երջանկութեամբ անցնել կենացս մնացեալ օրերը, զի մինչև հիմայ այնպէս յարմար մէկը չ'գտնելով դուրս երթալ որչէցի :

ՀՈՒՇ. Կ'ներէք Տեաքք, բտելու՝ որ այս պատահումն յաջողակ կերեւայ ինձ (կիրախիս) դու աղջկիդ ամուսնացնելու գիտաւորութիւն ունիս և այս ազնուական պարտնեալ ամուսնանալու, ասկէ աւելի արժանաւոր և փայլունչ փեսայ չեա կրնար ունենալ (Աստուծո՛ւմ) և դու ալ բնաւորութեամբ գեղեցիկ ընկեր մի կը փնտռես, ուստի այդ կողմանէ վտահ եղիք, ոչ միայն բնաւորութեամբ այլ և բնութեան պարզեւած ամեն ընտիր և գովելի ձիւրքերը կը փայլին մեր տերօջ աղջկան գէտքին վերայ. նա մանաւանդ առաքինութեամբ պատկուած է իւր ճակատը :

ԱՏՈՄ. (Քի կողմ) Ա՛հ որչափ սապգ կը խօսի :

ՀՈՒՇ. Չեմ երկնամիր երբէք որ ձեզ հաճելի պիտի չըլլայ այն, ուրեմն դուն ջրը վե մտքէդ՝ ճամբորդութեանդ որոշումն, և գու ալ Տէր, հաճութիւն տուր այս խնդրոյս :

ԿԻՐ. Ես սիրով կը հաճիմ տալու իմ զաւա

կըս այս ազնիւ պարտնին. բայց պետք է որ ինքն ալ աղջկիս տեսնելով իր հաճութիւնը տայ :

ԱՏՈՄ. Աղջկանը տեսութիւնը հարկաւոր չէ. ձեր պատկառելի և վեհանձն կերպարանքն ու ձեր հոգեակեալ համբաւոյն վստահութիւնը կը համոզեն զիս, և յայտնի կըրտեսնեմ որ ազնուատոհմ գերդաստանէ սերած օրիորդ մի չ'ղղջացներ զիս, երկրորդ՝ այս ուրախութիւնը ունիմ, որ իմ երկրորդական փափաքս պիտի լեցուի, այսինքն պիտի կարենամ հարստութիւնս վստահութեամբ ձեզ յանձնել և այն ստակով մէկ տեղ վաճառու կանութիւն ընել, որով անշուշտ կրնանք հանգիստ կեանք վարել :

ԿԻՐ. (Քի կողմ) Ո՛վ անպատում՝ ուրախութիւնս սասկի՛ իմաստակը :

ԱՏՈՄ. (Յեռքին ճապանին հանելով կիրախիս իւրոյ) Ուրեմն այս մատանիս վարդանուշայտուր որ մեր միութեան և ամուսնութեան կապը կը համարուի, թէպէտ չնչին բայց կը խնդրեմ որ իբրեւ սիրոյ առաջին նշան ընդունի զայն :

ԿԻՐ. (Քի կողմ) Իտէլքս պիտի թոցնեմ. կուզա՞նք սպասեցէք որ անմիջապէս աղջկիս հոս բերել տամ որ տեսնուիք :

ԱՏՈՄ. Ա՛յ երթալու ստիպեալ եմ զի կարգադրելու գործքեր ունիմ. բայց յետոյ գալով կրնանք երկար ատեն տեսնուելու և ուրախակցելու :

(Կը Քի կողմ)

(Շարունակելէ)

ԿՆԿԱՆ ՄԻ ԱՄԵՆԱԶԱՐՄԱՆԱԼԻ

ՀՆԱՐԻՐ

ԿԱՄ

ՊԱՐՏԻՋԻՆ ՄԵՋ ՉՈՒԿ ԲՈՒՍԵՒԼԸ

Պատուոյու մէջ ճարտար ու հնարագէտ կին մի իւր ամուսնոյն հետ դրաւ կը բռնէ ծանրագին բանի մի վերայ, զի եթէ կարենայ հնարքով մի ամուսինը յիմարանոց խրկել շահի զայն եթէ ոչ տուժէ նորա փոխարէնը :

Սորա ամուսինը որ Մինաս կը կոչուէր, բարի և միամիտ մարդ մի ըլլալով, գրեթէ քիչ ատենէն կը մոռնայ դրաւը, ու շարունակ գործոյն պարսպած ատեն, որ մի կինը

պարտեզ իջնարով կը կանչէ պարտիզպանը ու կը հրամայէ որ անմիջապէս պարտիզին մէջ գտնուած բանջարեղէններն ու ծաղիկները աւանդ նոցա փնտսելու հողով արմատէն հանէ զանոնք յարմար և գոյ տեղ մի պահելով, նոյնպէս մատակարարին ևս կը հրամայէ որ անմիջապէս երթայ շուկայէն քանի մի տեսակ ձուկ գնէ, մատակարարը կնոջ ըսածը խտրոյն կուտարելով, կինը ձուկերը պարտիզպանին յանձնելով կը պատուիրէ, պարտիզին հողը արտարտ բանարով տմէն տեսակ ձուկ զատ զատ արտի մէջ թաղէ: Աւ կը պատուիրէ ծառաշից մեկու մի չքսել:

Այս հարբը ընելէն յետոյ նոյն ձուկերէն կը պատրաստէ այն օրուան կերակուրները. իրիկուան երբ Մինասը կուգայ ու սեղան նստելով կը տեսնէ զի բոլոր կերակուրները ձկեղէն են. զարմանալի բան, կ'ըսէ, ինչ բան է զի այսօրուան կերակուրներուն մէջ մսեղէն չըկայ. այս նոր սովորութիւն է: — Ինչու կը զարմանաս, կըսէ կինը, անտարբերութեամբ, կ'ուզէիր որ պարտիզին բուսած ձուկերը՝ որ օրէ օր կը հասունանան հոտին ու նետուին. — Ինչ, պարտիզին մէջ բուսած ձուկը, արդեօք մեր պարտեզը ծովու փոխուեցաւ. — սիրելի ամուսին, զիս ծաղրել կուզես, և ցանած ձկան սերմը չէս յիշեր, որ այնչափ հոգ տարիր. — Ինչ կ'ըսես, ըսած է որ հողքին մէջ ձուկ բուսնի, խելքիդ դպաւ. — Եթէ ըսած չէր, ինչպէս ցանեցիր ու բուսաւ, չեմ գիտեր թէ ես ցնորեալ եմ, բայց և այնպէս ազէկ կը յիշեմ որ այս երեկոյ մեր պարտիզպանը, պարտիզէն խոհանոցը բերաւ, թարմ թարմ ու գեռ ևս հողերը վաննին էին, ու կը շարժէին: — Ա՛՛է կին, ըսէ, զի բաւական եղաւ ան պիտան ու պարագ խօսքեր լսելու. — բարկանալ պէտք չէ, կ'իջնանք պարտեզ տիրանա տես ըլլալու: Այս խօսքին վերայ կ'իջնան պարտեզ, Մինաս կը ժպտէր միանգամայն սուշութիւն մի կը նկարուէր դիմաց վերայ: Պարտիզպանը կանչելով կ'ըսէ կինը, պարտիզպան, թրածկան (Գըրձ Գալըր) արտէն սկսէ առաջ հանել. երբ պարտիզպանը սկսաւ բահով տեսակ տեսակ ձուկերը հանել, ո՛հ, ի՛նչ բան է այս, ըսաւ Մինասը, ու սկսաւ պօռալ, կը տարակուսիմ, կը շփոթիմ, չեմ գիտեր ի՛նչ ըսել, պարտիզին մէջ ձուկ բուսնիդ, ո՛հ, արդեօք երանք է, կամ ուրիշ աշխարհ մի փոխադրեցանք, որ սկսաւ փոխանակ ծովու հողու մէջ բուսնի: — Ի՛նչ կ'ըլլաս, սիրելիդ իմ, այս զարմանալի բան մի չէ, բայց մի

պօռար գուցէ լսող մի կ'ըլլայ, և կը մեղադրէ զքեզ, ամեն է այս նոր բան մի չէ: Մինաս կնոջմէն անշնորով սկսաւ հաւատայալիանայ: Այսպէս մէկ քանի օր կուտէ մեր խեղճ Մինասը պարտեզին ձուկերը, և ախարժակին խիտ յարմար գալով ալ զարմանքը փարսած ու պէտք եղածին չափ հաւատաւ ցած էր: Երկու երեք օրէն յետոյ՝ ճամբան իւր բարեկամաց հանգիստելով կը հրաւիրէ ընթրիք ընելու: Նոքա ընդունելով Մինասայ հրաւերը կերթան տունը և սեղան կը նստին, բայց այն օրը կինը պարտեզին ձուկերը վերցնել տալով բանջարեղէններն ու ծաղիկները առջի պէս անկել տուած էր: Անզանին վերայ երբ կը տեսնէ Մինաս զի կերակուրները կերպարանափոխ եղած են, այս ինքն ձուկերուն տեղ մսեղէն կերակուրներ կը հարցնէ կնոջը թէ ո՛ր են ձկեղէն կերակուրները, որոյ համար էր որ այս բարեկամներս հրաւիրեցի — Ի՛նչ ձուկ, կ'ըսէ խորամանկ կինը, որո՞ հետ ձուկ խրկեցիր — ուրո՞ հետ պիտի խրկեմ, պարտեզը չից. հաւանք այնչափ բուսած ձուկերը — վայ ինձ, ինչ եղաւ ամուսինս, խելքագարեցաւ, ես ի՛նչ պիտի ընեմ. — Մ. ի՛նչ պիտի ընես, հիմայ պարտիզպանը կորսուի, անշուշտ ծախած է: — Բայց կ'աղաչեմ, խելքդ գլուխդ բեր, պարտեզը ձուկ չբուսնիր — Ի՛նչ. ո՞վ, ըսաւ որ չբուսնիր, քեզի հետ չէր որ իջնաք ու տեսանք: Այս բանին վերայ բարեկամները տրտմելով ու կարեկցութեան շարժելով, կը կապեն թևերը, բայց խեղճ Մինաս կը պօռար, թէ ես խենթ չեմ, իջնանք պարտեզ ու դուք ալ տեսէք. կինը կեղծ արցունք կը թափէր պօռալով թէ ո՛ր կը տանիք սիրելի ամուսինս, բարեկամները փոխնարով առն ձգեցէ, գիշերանոց յոճարանոց տարին իբր խենթ Մինասը: Այսպէս մէկ քանի օր յիմարանոցին մէջ շղթայակապ իւր գլխուն եկած արկածից վերայ մտայած աստէն մեկէն կինը կուգայ հոն, ու ամուսնոյն մօտենալով կ'ըսէ, սիրելի ամուսինս ձգէ այդ շղթաները որ դըրուս շահելու պատճառն էին ու եղան, ահա այն դրուն էր որ պարտիզին մէջ ձուկ բուսոց ու զքեզ հոս բերաւ: Հոս մեծապէս եղաւ երկանք զարմանքը, նաև անպատմելի եղաւ կնոջ ուրախութիւնը այնպիսի ծանրագին գրաւ մի շահելուն համար:

Ա լ Ի Մ Է Ք

(Տես թիւ 6, 7 :)

Վ շտապին ու դառնացեալ սրտիւ մեկնեցաւ նաև անկէց զի մէկ վարկենի մէջ բողբոյս սերը փճացան . և իսկոյն անհետացաւ այն երջանկութիւնը , զոր ալ ձեռք բերած կը Համարէր . ուստի դարձեալ Միայ այլ և այլ կողմերը շրջագայելով , աստանդիկ եղած տեղ մի չէր կրնար կենալ , և միշտ անհանգիստ , թշուառ , ու տաղաուկ կեանք մի վարելով վերջապէս որոշեց դէպ ՚ի Չինաստան ուղեւորիլ :

Նոյն երբ որ մի միայնակ և իւր արկածից տխուր յիշատակաց էրեւակացութեանը մէջ ընկղմած , ամայի դաշտերու մէջ կը շրջագայէր , դաշտին մէկ կողմէն ուրախալի երգոց և քաղցրահնչիւն նուագարանաց ու ցնծութեան աղաղակներու ձայներ հնչեց անանջին և մէկէն հետաքրքրութիւնը շարժելով , իւր ընթացքը ուղղեց դէպ ՚ի այն կողմը , և գեղզկահան բնակութիւն մի հասաւ , ուր տեսաւ գիւղացի արանց և կանանց խուռն բաղնութիւն մի , յորոց ոմանք նուագելով , ոմանք երգելով , ու շատերն նաև պարելով , ամենքն մեծաւ ուրախութեամբ կը զուարճանային :

Վիճակի զորմանքը ոչ նուազ եղաւ , այն ինչ տեսաւ որ պարզ ու անմեղ ուրախութիւն մի կը փայլէ ամենուրեք դիմաց վերայ , ու արեգարդ ծերունւոց մը քով մօտենալով , որ նոցա պարահանգէսը գիտելով կը զուարճանար , ու նորա զուարթ դէմքը լաւ ևս կիմացներ որ արևուր հասակը մարմնայն և հոգւոյն ուժը , միանգամայն աշխոյժը բնաւ չէր պակսեցուցած :

Ուստի Վիճակը խնդրեց ծերունիին որ այն տարօրինակ ուրախութեան պատճառը իմացնել հաճի իրեն : — Երբէք տարօրինակ չեմեզի համար այս հանգէսը , ըսաւ ծերունին , այլ մեր հանգստութեան նուիրեալ օրերը , Մտուածոց պատշաճ պաշտօնը մատուցանելէն յետոյ մնացեալ ժամերը այսպէս սերտ խաթութեան և անմեղ զուարճութեան կը զրհենք : — Ուրեմն քաղցրատենջ փոխարեն կը նեք , ըսաւ Վիճակը , ձեր քրտնահոս աշխատանայ ու նեղութեանց և այն աղերջանիկ կենաց տաժանելի ծանրութեանը , զոր ուրիշ օրեր բռնադատեալ էք վարելու :

Վյա խօսքին վերայ ծերունին ժպտելով , եօթմաստուն տարիէն աւելի է ըսաւ , որ այսպիսի կենաց մէջ կ'անցնեմ օրերս , և ու

նեցած վիճակիս համար գոհութիւն կուտամ Մտուածոց , զի ամենեւին թշուառութեան դառն ճաշակը չ'զգացի : Մէկ գիտեմ որ ձեզ նման ճօխ և հարուստ Միջինը , կը կարծեն որ սկի , արծաթ , և բաղձագանձ ու շողջուրն գոհարներ գանուած տեղ , երջանիկ կեանք կը վարուի , սակայն մեք գիւղականքս ձեր քաղաքաց ու բնակարանաց մէջ գլուխուած ատեն կը լսեմք ու կը տեսնեմք այն աղմուկներն ու վշտմբեր նեղութիւնները որ բնաւ չեն մեկնիր անկէ , և ձեր ճօխ հարուստութեանց վերայ փոխանակ նախանձերու , խիստ շատ անգամ կարեկցութեան կը շարժիմք : Միտորք և խաղաղ կեանքը անձանթթ է ձեզ , զի ագահութիւնն ու փառաստէնջութիւնը և անդուլ կուրներն ու գժտութիւնները միշտ կը յափշտակեն զայն ձեր մէջէն , և ուր չկայ խաղաղութիւն , նաեւ չկայ հոն երջանկութիւն : Մտարև մեք ձեզի չափ գանձերու տեր չեմք , և սկիսն ու արծաթը հաղիւ կը ճանաչեմք , բայց ձեր սարկով գնած բաները , մեզ ըստ բուսականին մեր ոչխարներն ու արտերը կուտան և գոհութեամբ սրտի կը վայելեմք զաննք :

Վիճակը ծերունւոյն ըրած խօսքերուն վերայ աղաճ , և ուղեւով իմանալ թէ աղքատութեան և քրտնաջան աշխատանայ մէջ ինչպէս կարելի է ըլլալ երջանկութեան վաշելումը , զոր ինքն այնքան փափուկ կենաց ու ճօխութեան մէջ տակաւին չէր կրցեր ձեռք բերել : Որոշեց նորա հետ սակաւ ինչ խօսակցիլ , զուարճանալով միանգամայն այն գիւղականաց հանգէսին վերայ որք անմեղ խաղերով իւրեանց պօսանքը կը շարունակէին : Ինչքա բնաւ չհասնիր , ըսաւ ծերունւոյն թէ ձեզ նման մարդիկ ինչպէս կարող են երջանկանայ , որք բռնադատեալ են միշտ տաժանելի ու թշուառ կեանք մի վարելու աշխատութիւնը , պատասխանեց ծերունին , ըստուգիւ դժոխմբեր նեղութիւն է նոցա , որք սովորած են միշտ դատարի կենալ , իսկ մեզի համար աստիճակն սփոխանք մի է : Կենացս մէջ երբէք այնպէս տխուր և տաղտկալի ժամեր անցուցած չեի , երբ հիւանդութիւն մի գալով վրաս , ստիպուեցայ աւօրեայ աշխատանքէս ու գործքէ դադարիլ , և այն ատենը խիստ երկար կը թուէր ժամանակս ու ամեն վայրկեան հաղարումէկ տարւոյ ազգեցութիւն կուտար ինձ , այլ երբ գործքերովս կը զբաղիմ , արագահաս են ինձ ժամերը և երեկոցեան ինչպէս գալը չեմ իմանար դրեթէ ու երբէք չեմ գգար այն ճանձրութիւնը ,

որոյ անբերելի ծանրութեան փորձը դիւրաւ առի, այն ինչ հարկադրեցայ դատարի կենտր, և շատ անգամ նաև քաղաք մտած առ տենս սրարարորդ մարդկանց դիմաց վերայ նը կարեալ կը տեսնեմ դայն:

Շարունակել:

Ծ Ա Ն Ո Ւ Յ Մ Ո Ւ Ք

Յ Ա Ւ Ե Ր Ե Ա Հ Ա Ր Ս

Հ Ա Ն Դ Ե Ս Կ Ի Ս Ա Մ Ս Ե Ա Յ

Այս անունով բանասիրական Հանդէս մի ալ սկսաւ հրատարակուել Օմիւսնիա խրմբադրութեամբ Պ. Սարգիս Փափաղեանի, որոյ յայտարարութիւնը արդէն քանի մի ամիսէ ՚ի վեր ձեռքերնիս հասած էր ու անհամբեր նորա հրատարակմանը կապուելնը: Առաջի այս օրերս նորա առաջին և երկրորդ թիւերը հանդերձ չքնաղ Յաւերժահարանց գեղեցիկ պատկերներով, ընդունելով խնդութեամբ օրաի կը շնորհաւորեմք նորա գալուստը ու յաջողութիւն մաղթելով մեր կողմանէ անուշահոտ Վարդ մի կը նուիրեմք գեղեցիկագէմ սիրուն Յաւերժահարսին և կը խնդրեմք զի սիրելի ազգայինք ևս իրենց կողմանէ պէտք եղած քաջաբերութիւններն չխընայեն նորա վեցամսեայ շրջանին երկու մեծիտ ու կէս հասուցանելով բաժանորդ գրուել, որոյ ստորագրութեան տեղն է Վ. Պօլիս Մեծ Նոր Խան Բնթերցասիրաց Թանգարան:

Հ Ո Ւ Ե Դ Ե Ր Յ Թ Ո Ւ Չ Ն Ի Կ

Այս բանասիրական հանդէսը որ տարի մի ըստ կարի ծառայեց ազգիս բարօրութեանը, երբ իր 12<sup>րդ</sup> թուով ծանայց հասարակութեան իր հոգեւարքը ու կերած թխել կը ՚ի կարեկցութիւն շարժեց զմեզ իր այն ցաւալի վիճակին վերայ, բայց այն ինչ նորա 13<sup>րդ</sup> թիւը կարգացինք. գրեթէ փոքր ինչ ուրախութիւն մի զգացինք իմանալով նորա հոգեւարձը որ ազգասէր սրտերու փտահացած 1862 տարին սոք կոխելով քաղաք ժրջիտով մի ներկայացաւ Ազգայնոց առեւի ծառայութիւններ ընելու նպատակա: Սակայն երբ նորա 14<sup>րդ</sup> թիւն ալ մէկ մի աչքէ անցունցինք զարմանք մի մեզ սրտանց զմեզ տեսնելով զի նա անտակ մի հիւանդի նման զանազան փոխիտութեանց ենթակաց կըլլայ,

երբեմն վատանողը, և այսօր իր վերջին շունչը փչելու ժամանած: Եթէ ազգասէր անձինքը նորա վեցամսեայ շրջանին բաժանորդ գրուելով 30 դահեկան նորա այս ցաւալի հիւանդութեան դարման ու քաղցեւորի թուջ նիկին կերակուրի գին չհատուցանեն խեղճ թուջնիկ այսօր կամ վաղ անտթութենէն թեւերը կտխած իր փափուկ կեանքը պիտի վերջայնէ: Առաջի քաջայայտ եմք զի սիրելի Ազգայինք դայն այս հիւանդութենէ ազատելու պիտի բարեհաճին որ կը խոստանայ յաւիտեան շնորհապարտ կգանուիլ նոցա առատաձեւնութեան և աղիոււարտութեան:

Վարդը այսօրու ընէ իր սպագրութիւնը Ո. Յ. Ք. Տարանէն Յ. Միւհէնտիտեանին փոխադրած է, նոյնպէս և ստորագրութեան տեղն ալ, հետեւաբար ասկէ ետքը մեզի ուղղուած նամակները կամ որ և իցէ գրութիւնները Վալաթիա Յ. Միւհէնտիտեան սպարանը խրկուելու են: Առսկէց շուտով ձեռքերնիս կը հասնի:

Մեր արգայ բաժանորդներէն ներումն խնդրելով կը խոստանամք զի ասկէ ետքը որչափ կարելի է շուտով ձեռքերնին պիտի հասցնեմք Վարդը, որոյ մինչև ցարդ կանոնաւոր ցրուիչ մի չունենեալն էր պատճառը:

Նաև սա ևս կը խնդրեմք կը որք դեռ իրենց բաժանորդութեան պարտքը վճարած չեն շնորհելու բարեհաճին, վասն զի մեծ կարօտութիւն ունինք ու ընդհանուր բաժանորդաց ցուցակը պիտի հրատարակեմք:

Պ. Կոմիտաս Թօսուհեանի Թախթախանի վարի յարկը թե ջ տեսնեալ մի բռնելով կը ծանուցանէ զի որ և իցէ Հանդէսներու կամ օրագիրներու բաժանորդ գրուել ուղղը կրնայ հոն ստորագրուիլ և անկէ ընդունել զանոնք:

Նաև ծախու կը գանուին հոն Հայաստանի պատկերը և նորանոր հեղինակութիւնները: Միայն ուրբաթ և կիրակի օրերը գոց է սենեակը:

ԽՄԲԱԳԻՐ-ՏԵՕՐԵՆՔ  
ԹՈՎՄԱՍ Պ. ՊԵՌԵԱՅ  
ՍԱՐԳԻՍ ԲԱՐՍԵՂԵԱՆ

Ի ՂԱԼԱԹԱ Կ. ՊՕԼՍՈՅ  
Ի ՏՊԱՐԱՆԻ ՅՈՎՀԱՆՆՈՒ ՄԻԻՀԵՆՏԻՍԵԱՆ  
ՀԱՅՈՅ ԵԿԵՂԵՑԻՈՅ ՓՈՂՈՅ ԹԻՒ 17